*պատկերը, մեծաշուք հանդիսիւ, մատուցանում է Ձեր Սրբութեան սրտագին երախտագիտութիւն այն թանկագին նուէրի համար, որի առաջին վերառաքեցինք առ Աստուած աղօթք Ձեր կենաց երկարութեան համար, թող Ձեր օրհնութիւնները լինին գրաւական ապագայում Ռուսիոյ զէնքի յաջողութեան թշնամիների վերայ»:*

---

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

# ՆՈՐ–ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

(*Եօթնէրորդ տարի*) Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՅ **1890** ԹՈՒԱԿԱՆԻՆ

*կը հրատարակուի նոյն ձևով ու ծրագրով*

*Խմբագրութիւնը կստանայ և սեպհական հեռագիրներ*

---

*Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատը՝ 5 կոպ.,*
*Եւրոպայի, Թուրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ.*

*Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն.*

*Թիֆլիսում բաժանորդ են գրվում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը.*

*Խմբագրատունը գտնվում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.*

*Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝* Тифлисъ въ Редакцію ежедневной газеты "НОР-ДАРЪ" *կամ* Tiflis (Caucase) Rédaction du journal "Nor-Dar".

*Խմբագիր-հրատարակիչ՝* ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

# ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# „ԱՐՁԱԳԱՆՔԻ“

---

Ներկայ 1889 թուականի Դեկտեմբերի սկզբից՝ կառավարութեան թոյլտւութեամբ՝ «ԱՐՁԱԳԱՆՔ» շաբաթաթերթը կըսկսի հրատարակուել ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ.

Սորանից մօտ 6 ամիս առաջ՝ վճռելով «Արձագանքը պատկերազարդ դարձնել՝ խմբագրութիւնս ընթերցողներին բացատրեց իւր նպատակը «Արձագանքի» համակրողներին թէ Թիֆլիզում և թէ մանաւանդ գաւառներում յարգելով մեր նպատակը՝ շտապեցին յայտնել իրանց ջերմ ցանկութիւնը՝ օր առաջ «Արձագանքը» պատկերազարդ տեսնել.

Բազմաթիւ բարեկամական նամակներ մեզ համոզեցին՝ որ հայ ընթերցողը զգում է պահանջ՝ ունենալու լուրջ ուղղութեամբ հասարակական շահերին ծառայող մի թերթ՝ որ մի և նոյն ժամանակ զարգացնի իւր ընթերցողների գեղարուեստական ճաշակը.

Աչքի առաջ ունենալով այդ պահանջը՝ սկսում ենք պատկերազարդ «Արձագանքի հրատարակութիւնը՝ հաւատալով հասարակութեան գնահատութեանը և յուսալով՝ որ մենք կունենանք բաժանորդների այնքան թիւ՝ որ անհրաժեշտ է մեր մեծածախք թերթը արժանավայել կերպով հրատարակելու համար.

Պատկերազարդ «Արձագանքը» կը հրատարակուի այժմեան ծրագրով՝ աւելի մեծ դիրքով և աւելի ճոխ բովանդակութեամբ.

Լոյս կը տեսնէ շաբաթը մի անգամ՝ կիւրակի օրերը.

## ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կը պարունակէ հետևեալ պատկերները և նկարները.

I) Պատկերներ հայրենի և օտար ժամանակակից ու պատմական գործիչների՝ հռչակուած պետական ծառայութեան՝ գիտութեան գրականութեան և գեղարուեստի ասպարէզներում:

II) Պատկերների արձանների՝ զանազան տեսարանների և պատճէններ գեղարուեստական նկարների.

III) Ուրուագիծներ՝ գծագրութիւններ՝ լուսանկարներ տեղագրական և հնագիտական բովանդակութեամբ.

IV) *Ճարտարապետական, դրամագիտական և դրօշագրական նկարներ և պատկերներ։*

V) *Ծաղկանկարներ և բառախաղութիւններ։*

---

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» *համար պատկերների և նկարների փորագրութիւնները կը ստացուին պարբերաբար արտասահմանից և Պետերբուրգից։ Այս մասին Պետերբուրգում գործին հմուտ անձանցից կազմուած է մի առանձին յանձնաժողով, որ պիտի մատակարարէ* ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» *պատկերների փորագրութիւնները։*

*Առաջիկայ տարուայ համար արդէն պատուիրուած են և շուտով կը ըստացուին մեր ծրագրին համեմատ բազմաթիւ պատկերներ։*

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԸ» *կը տպագրուի ընտիր և յատկապէս պատուիրուած թղթի վրայ։*

*Տպագրութիւնը կը լինի պ. Յովհ. Մարտիրոսեանի տպարանում, որ առաջիկայ տարուայ սկզբից կունենայ արտասահմանից բերած նորագոյն յարմարաւոր մեքենաներ և հայերէն ճոխ և բազմատեսակ տառեր։*

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» *մասնակցելու են մեր բոլոր հին աշխատակիցները, որոնց մէջ համապատասխան բաժանուած են թերթիս բաժինները։*

---

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» *բաժանորդագինն է տարեկան* ՏԱՍՆ *րուբլի, կէս տարով* ՎԵՑ *րուբլի։*

*Առաջին տարուայ բաժանորդները թերթս կը ստանան* 1889 *թ. Դեկտեմբերի* 1*-ից մինչև* 1891 *յունվարի* 1*-ը, այսինքն մի տարի և մի ամիս։*

*Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։*

*Թիֆլիզում բաժանորդագրութիւն ընդունվում է Խմբագրութեանս մէջ, Կենտրոնական գրավաճառանոցում և Խմբագրի մօտ (Փոխադարձ Վարկի Ընկերութիւն)։*

*Օտար քաղաքներից պէտք է դիմել՝*. Тифлисъ, «Редакція еженедѣльнаго иллюстрированнаго журнала „АРДЗАГАНКЪ“: *Իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase, Russie) Redaction du journal illustré „ARDZAGANK“.

---

# „ՄՈՒՐՃ“

## ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

### 1890 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

### ԲԱՑՈՒԱԾ Է

---

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1890 Թուականին կը հրատարակւի նոյն դիրքով, բայց աւելի էլ մեծ ծաւալով, քան 1889 Թուականին.

«ՄՈՒՐՃ»-ի համարները լոյս են տեսնելու ԱՄԵՆ ԱՄԻՍ կանոնաւոր կերպով.

«ՄՈՒՐՃ»-ի ծրագիրը նոյնն է մնալու, ինչ էր և այն 1889 Թուականին, այն է՝

1. Յօդուածներ գրական, տնտեսական, իրաւական, պատմական և հոգևոր բովանդակութեամբ.
2. Բանաստեղծական՝ վէպեր, պատմութիւններ, դրամաներ, ոտանաւորներ, երգիծաբանութիւն.
3. Յօդուածներ Կովկասեան կեանքի հասարակական խնդիրներից.
4. Թղթակցութիւններ Ռուսաց տէրութեան և Արտասահմանի զանազան տեղերից.
5. Յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերից.
6. Գրախօսութիւն և քննադատութիւն.
7. Հաշիւներ այլ և այլ ընկերութիւնների.
8. Թատրոն, Երաժշտութիւն, Գեղարուեստ.
9. Տեսութիւն ներքին և արտաքին քաղաքական անցքերի.
10. Ներքին և Արտաքին Քրոնիկոն և զանազան լուրեր.
11. Յայտարարութիւններ.

«ՄՈՒՐՃ» Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція журнала МУРЧЪ.

---

# ԱՂԲԻՒՐ

## ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

### ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կըհրատարակուի նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ, դիրքն աւելի մեծացրած աւելի շքեղ Թղթի վրայ և նորագոյն տառերով.

ԱՌԱՋԻՆ ՊՐԷՄԻԱՆ Է ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԳՐԱՎԻՒՐ

# ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ

ՄԷԿ ՈՒ ԿԷՍ ԱՆԳԱՄ ԱՒԵԼԻ ՄԵԾ՝ ՔԱՆ ԱՅՍ 1889 Թ. «ԱՐՇԱԼՈՅՍ ՊԱՏԿԵՐԸ»

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ռուբլի է և պրեմիայի ճանապարհածախս պէտք է ուղարկել 28 կոպ. փոստի մարկա.

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻՑ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮРЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR».

# „ՏԱՐԱԶ"

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ—ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

### ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Կը հրատարակուի Թիֆլիզում առաջիկայ Յունվարի մէկից մեր յայտնի հեղինակների, նկարիչների մասնակցութեամբ ամիսը մի անգամ դիրքը (39—28 սանտ.) քառածալ, մօտաւորապէս ռուսաց „Живописное Обозрѣніе" հանդիսի դիրքով.

«ՏԱՐԱԶԻ» նպատակն է հայ անդաստանում ցանել գեղեցկի և բարւոյ սերմեր ու արմատախիլ անել տգեղ և չար որոմն.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Գեղարուեստ և գիտութիւն. Բ. Պատմական և ժամանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական գրուածներ. Գ. Բանաստեղծութիւն. Դ. Քննադատութիւն և կենսագրութիւն. Ե. Կար, ձև, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ. Զ. Տնային արդիւնաբերութիւն և տնտեսութիւն. Է. Ճանապարհորդութիւն և արկածք. Ը. Երաժշտութիւն և Թատրոն. Թ. Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ և այլն. Ժ. Ֆէլիէտօն, Ծաղր, Առած, Կատակ, ԺԱ. Շախմատի և այլ խաղեր, Րեբուս, Հարցեր, Խորհուրդներ, այլևայլք, Պատասխաններ.

«ՏԱՐԱԶԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ 3 Ր. Է.

«Տարազին» և «Աղբիւրին» միանուագ բաժանորդ գրուողը մի և նոյն հասցէով մինչև առաջիկայ Դեկտեմբերի 1-ը փոխանակ 3 ր. պիտի վճարէ 2 ր. այսինքն «Տարազ» և Աղբիւր» միասին փոխանակ 6 ռուբլու 5 ր. և 28 կ. փոստի մարկա «Աղբիւրի» պրեմիա «ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ» պատկերի ճանաճապարհածախ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻՑ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Հասցէն՝ Тифлисъ, Редакція иллюстриров. Журнала „ТАРАЗЪ", իսկ Արտասահմանից. Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré „TARAZ".


Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.